Funded by the European Union

ԵՄ «Տեղացի դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագիր



Իրականացման ժամանակահատված: 01.10.2020 - 30.09.2024

ԱլԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 7 867 812

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP Armenia

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/EULEAD4LoriTavush/ and https://twitter.com/LEADLoriTavush

Նախագծի կայքէջ: The project does not have a website

Նախագծի նկարագրություն:

ԵՄ «Տեղացի դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագիրը ֆինանսավորված է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնեսության կազմակերպության գործընկերությամբ, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարության հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրն օգնում է Լոռու և Տավուշի մարզային բնակչությանը՝ տղամարդկանց, կանանց, երիտասարդներին, տարեցներին և քաղաքացիական խմբերին, ներառյալ փոքրամասնություններին, ակտիվ դերակատարում ունենալ ներառական, ճկուն և կայուն տեղական զարգացման մեջ, որի նպատակն է մշակել տարածքային զարգացման մոդելներ՝ քաղաքացիներին ներգրավելով զարգացման օրակարգի ձևավորման, որոշումների կայացման և իրականացման գործընթացներում:

Ակնկալվող արդյունքներ:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է ստեղծել թվով 5 տեղական ակտիվ խմբեր (ՏԱԽ-/LAG) և տարածքային զարգացման ռազմավարական թվով 5 ծրագրեր: Բացի այդ, ծրագրում կներգրավվեն և հմտություններ կստանան շուրջ 1000 տեղաբնակ՝ տեղական զարգացմանը ակտիվորեն նպաստելու համար: Մարզային և կենտրոնական կառավարման մարմինների թվով 70 ներկայացուցիչներ կբարելավեն իրենց հմտությունները: Ծրագրի ընթացքում կֆինանսավորվեն 150 տեղական նախաձեռնություններ:
Քովիդի համավարակի հետվերականգնողական միջոցառումների շրջանակներում 160 ընկերություն կստանա աջակցություն , կստեղծվի 200 նոր աշխատատեղ, աջակցություն կստանան թվով 300 անհատներ և շուրջ 3000 տեղացի բնակիչ: